սին։ Յակոբ եպս. այդ տեղեկութիւնները տալէն վերջ, իր վիճակին համար հրահանգ կը խնդրէ պատրք.էն։ Շահթահմազ Բ. այդ կողմերը արշաւած էր 1727ին։

ՅԱԿՈԲ ԵՊՍ.— Մբ. Նւ. Պոնտոսի. 1799ին կը վախճանի Պաֆրայի մէջ։

ՅԱԿՈԲ ԵՊՍ. ՆՈՒՐՏԻՆԵԱՆ, ԲԱՂԻՇԵՑԻ, և որդին ԱԲՐԱՀԱՄ ԵՊՍ.— Յակոբ՝ իր կնոջ մահուանէն յետոյ, Բաղէշի խռովութիւններու ժամանակ, իր որդւոյն՝ Աբրահամի հետ քաշուեցաւ Ամրտոլի վանքը. ուր երկուքն ալ ուսում ստանալով վարդապետ ձեռնադրուեցան, և յետոյ մեկնեցան Ս. Էջմիածին և եպիսկոպոսացան։ Հայր և որդի՝ այս երկու եպս.ները Գրիգոր Շղթայակիր պատրիարքի օրով ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը այցելեցին և ընդունուեցան եպիսկոպոսներու շարքին մէջ. Շղթայակիր պտրք. Աժտէրխանու նուիրակութիւնը անոնց յանձնեց և կատարեցին իրենց պաշտօնը արդիւնաւոր կերպով։ Շղթայակիրի մահուանէ վերջ հայր եւ որդի Պոլիս մեկնեցան և շատ սիրով ընդունուեցան Յակոբ Նալեան պտրք.էն։ Յակոբ եպս. արքունի պալատան աղուամի կարապետի օգնութեամբ ստացաւ Տիգրանակերտի առաջնորդութիւնը, իբր յաջորդ Պետրոս եպս.ի. նոյն պաշտօնը հինգ տարի վարեց և ծերութեան պատճառով յանձնեց զայն իր տղուն Աբրահամ եպս.ին և ինքը մեկուսացաւ Արզնիի Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքը, ուր քիչ վերջ վախճանեցաւ։ Աբրահամ եպս. առաջնորդութեան հրովարտակին ստացումին համար Պոլիս մեկնեցաւ և 1754ին ալ պոլսեցի նորընտիր կթղ. Աղեքսանդր Բարաքաշեանի հետ ուղևորելով հասաւ Եւդոկիա՝ բայց հոն բաժնուելով կաթողիկոսէն՝ գնաց Տիգրանակերտ. ինը տարի պաշտօնավարելէ վերջ, կը վախճանի 1763ին Արզնի վանքին մէջ և կը թաղուի իր հօրը շիրմին մօտ, (Սարաֆ, էջ 148—150)։

ՅԱԿՈԲ ԵՊՍ.— Հաւանաբար Է. դարու հայ եպիսկոպոս մը Ս. Երուսաղէմի Համբարձման վանքերէն միոյն մէջ հաստատուած. անոր տապանագիրը կը գտնուի Զիթենեաց լեռան վրայ, մեծ հաւանականութեամբ Երբեմնի Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին գաւիթը. Յակոբ եպս.ի դամբարանը նուրբ արուեստով շինուած մոգայիք մ'է, որ ունի հետևեալ արտ-